«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ **2021**

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ **Դասի պլանավորումը համագործակցական մեթոդների և ժամանակակից ՏՀՏ-ների միջոցով**

---

ԱՌԱՐԿԱ Հայոց եկեղեցու պատմություն

---

ՀԵՂԻՆԱԿ Սեդա Առաքելյան

---

ՄԱՐԶ Սյունիք

---

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Շաղաթի միջնակարգ դպրոց

---

Բովանդակություն

Ներածություն________________________________________________3

Գրական ակնարկ_______________________________________________4

Գործնական համատեքստ________________________________________7

Հետազոտության ընթացքը_______________________________________8

Տվյալների մշակում և վերլուծություն_______________________________9

Եզրակացություն_______________________________________________17

Գրականության ցանկ__________________________________________18

Ներածություն



**Կրթությունը գիտելիքների քանակ չէ,**

**այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի,**

**ինչ գիտես:**
**Ադոլֆ Դիստերվիգ**

անհրաժեշտ է պլանավորել այպիսի դաս,որը լինի և գործիքներով համալրված,և մատչԼինում են դասաժամեր,երբ ժամանակի մեծ մասն անցնում է, օրինակ, նախորդ դասի հարցումը կատարելու կամ կշռադատման փուլում դասն ամփոփելու վրա:Արդյունքում ստացվում է,որ նոր դասի մատուցման կամ ամրապնդման փուլում այլևս ժամանակ չի լինում դասը լիարժեք մատուցելու:Այդ իսկ պատճառով ելի,և յուրաքանչյուր փուլ ունենա իրեն հատկացված կոնկրետ ժամանակ:

**Հետազոտական աշխատանքի գլխավոր նպատակն է՝ դասի ճիշտ պլանավորման և ժամանակակից տեխնոլոգիաների ճիշտ ընտրության արդյունքում բարձրացնել դասի արդյունավետությունը:**
Իսկ մեթոդների ճիշտ ընտրությունը կնպաստի կրթության որակի բարձրացմանը:

Հետազոտության ընթացքում կարող են լուծվել մի շարք խնդիրներ.

*1.***Կենտրոնացնել աշակերտների ուշադրությունը**
*2.***Զարգացնել լսելու հմտություն**
*3.***ՏՀՏ-գործիքների միջոցով զարգացնել նաև դիտելու և տեսածը ներկայացնելու հմտություն**
*4.***Դասապրոցեսին կմասնակցեն բոլոր աշակերտները,այդ թվում նաև ԿԱՊԿՈՒ աշակերտը:**
*5.***Աշակերտների մոտ կմեծանա նորագույն տեխնոլոգիաների միջոցով դասին ակտիվորեն մասնակցելու ցանկություն:**
*6.***Դասաժամն ամբողջությամբ կհամապատասխանի դասապլանին:**

## Գրական ակնարկ



## Ի՞նչ է իրենից ներկայացնում դասի պլանավորումը ժամանակակից մեթոդների և ՏՀՏ-ների միջոցով:

Դասապրոցեսի ճիշտ կազմակերպելու,այն լիարժեք մատուցելու համար անհրաժեշտ է դասի հստակ պլանավորում,որը դասի արդյունավետության բարձրացման կարևոր գործոնն է:Իսկ ճիշտ պլանավորման համար անհրաժեշտ է ունենալ հստակ նպատակ և խնդիրներ:
Նպատակին հասնելու ճանապարհին պետք է կարողանալ սովորեցնե—զարգացնել—դաստիարակել:
Ուսուցիչն իր առջև պետք է դնի հստակ նպատակ և ամբողջ դասաժամի ընթացում քայլ առ քայլ իրականացնի այն.օրինակ

.նյութի ընկալումը **բոլորի** կողմի

.գիտելիքների կիրառում

.հասնել նրան,որ….

.նպաստել զարդացմանը….

.ընդհանրացնել……

.համակարգել…..

•օգնել……. և այլն:

Մեծ տեղ ԷՄեծ տեղ է հատկացվում նաև ուսուցման տաքսոնոմիաներին,որոնք նպատակ ունեն ավելի բազմազան դարձնել ուսուցումը և սովորողների մոտ տարբեր մակարդակի հմտություններ և կարողություններ զարգացնել:Հիմնականում օգտտվում են Բլումի տաքսոնոմիան:Սակայն 2021թ Բլումի աշակերտ Անդերսոնը տաքոնոմիայի մեջ որոշակի փոփոխություն կատարեց

| Բլում | Անդերսոն |
|---|---|
| Գիտելիք | Հիշել |
| Ըմբռնում | Ըմբնել |
| Կիրառում | Կիրառել |
| Վերլուծություն | Վերլուծություն |
| Համադրում | Արժևորել |
| Արժևորում | Ստեղծել |

Արդի ժամանակաշրջանում բացի դասապրոցեսի ավանդական կազմակերպումից մեծ տեղ է հատկացվում նաև ինտերակտիվ ուսուցմանը:Քանի որ աշակերտներին զբաղեցնում են սոցիալական ցանցերը և նրանք ժամանակի զգալի մասը հատկացնում են դրան,այդ իսկ պատճառով պետք է դասի պլանը հագեցած լինի նաև նորարարական մեթոդներով,ՏՀՏ առցանց գործիքներով,երեխաների մոտ հետաքրքրության և ներգրավվածության ապահովման համար:

Ուսումնառության մեթոդների օգնությամբ սովորողը ձեռք է բերում անհրաժեշտ գիտելիքներ,ձևավորում կարողությունններ և հմտություններ,իսկ գնահատման մեթոդները միտված են արժանահավատ ձևով սովորողնեևի կողմից կրթական վենջնարդյունքի ձեռքբերման չափմանը:Եվ հիմք ունենալով առարկայական պետական չափորոշիչները իր բոլոր բովանդակային բաղադրիչներով կազմվում է դասի պլան,որն ունի մի քանի կետ և յուրաքանչյուր  կետում կարելի է օգտագործել համապատասխան մեթոդներ:

https://www.canva.com/—Նախապես կազմված սահիկաշար,որի միջոցով կարելի է բացատրել կամ ամփոփել դասը:Canva առցանց գործիքը բազմաֆունկցիոնալ գրաֆիկական խմբագիր է նախատեսված  ցուցադրական սահիկաշարեր, տեսանյութեր, զանազան կազմեր ստեղծելու, նկարներ խմբագրելու և այլնի համար:
Canva գործիքը հնարավորություն է տալիս.

- հարթակների հետ համատեղելիություն՝ կարելի է աշխատել   Windows, IOS , Android համակարգերում

- վեբ բովանդակության ինտեգրում՝ Canva գործիքի միջավայրում կարողանում ենք հեշտորեն ինտեգրել սահիկներ Facebook-ից, Dropbox-ից, Google Drive-ից, Instagram-ից, համակարգչից, ինչպես նաև ներառել մուլտիմեդիա YouTube, Pixton, Typeform, Brandfolder, Flickr, Giphy ամպային և այլ առցանց հարթակներից
- պարզություն, եթե PowerPoint ծրագրով աշխատելիս անհրաժեշտ է որոշակի վարպետություն, ապա Canva գործիքի միջավայրում կարելի է առանց հատուկ ջանքեր գործադրելու կողմնորոշվել և ստեղծել հետաքրքիր ու դինամիկ սահիկաշարեր
- սահիկաշարերում տեղադրել ցանկացած գրաֆիկական պատկեր, ստեղծել դիագրամներ, գրաֆիկներ
- ցանկացած հղում դարձնել QR կոդ և կցել սահիկաշարին

http://www.wisemapping.com/— WiseMapping առցանց գործիքը օգտագործվում է նյութը սխեմաների միջոցով ներկայացնելու համար: Այս դասընթացում նպատակահարմար է գործիքն օգտագործել դասի պլանը սխեմատիկ ներկայացնելու համար, որի արդյունքում հնարավոր կլինի մեկ հղմամբ ներկայացնել մեկ դասի պլան ՝ դասին անհրաժեշտ բոլոր դիդակտիկ նյութերով , հղումներով և էլեկտրոնային պաշարներով:Հնարավեր է կազմել դասի պլան:

https://quizizz.com/admin—Այս ծրագրի օգնությամբ հնարավոր է իրականացնել սովորողների առցանց համաժամանակյա միավորային գնահատում:
Գործիքն օգտագործելիս սովորողները պետք է իմանան համապատասխան հարցման մուտքի կոդը: Սովորողները հարցադրումներին հետևելու են և պատասխանները նշելու են տիրույթին միացված ցանկացած գործիքի (հեռախոս,համակարգիչ,պլանշետ)օգնությամբ:
Հարցման ավարտին հնարավոր է MS Exel ֆորմատով ներբեռնել սովորողների միավորային գնահատականները:
Այս տիրույթում աշխատելիս գնահատվում է սովորողների կատարած առաջադրանքների և՛ արագությունը և՛ ճշտությունը:
Վարժություններ ստեղծելիս հնարավոր է կազմել հարցադրումներ բազմակի ընտրանք ձևաչափով: Հարցերի հաջորդականությունը խառնվում է համակարգի միջոցով:

https://miro.com/app/dashboard/-

Այս տարածքում տեղադրված բոլոր առարկաները կարող են խմբագրվել ինչպես այն ստեղծողի, այնպես էլ դրան հասանելիություն ունեցող ցանկացած այլ անձի կողմից: Անհրաժեշտության դեպքում, հնարավոր է տիրույթ մուտքագրել  բոլոր ցանկացողներին և աշխատել համատեղ:
Miro- ն ինտերակտիվ գրատախտակ է, որը հնարավորություն է տալիս ստեղծել անվերջ առցանց գրատախտակներ իրական ժամանակում թիմային աշխատանքի համար, պատրաստել բովանդակային ինտերակտիվ դասեր: Այն մուտքի հնարավորություն ունի աշխարհի ցանկացած կետից: Miro-ն ուսումը ինտերակտիվ դարձնելու լավագույն միջոցներից մեկն է:

Այս գործիքի միջոցով հնարավոր է առաջադրանքներ տալ, հարցում անցկացնել և կատարել այլ գործողություններ, ինչպես նաև օգտագործել այն վեբինարների ընթացքում՝ որպես էլեկտրոնային գրատախտակ:
https://learningapps.org/—Learningapps.org կայքի հնարավորություններով պատրաստած էլեկտրոնային ուսումնական ռեսուրսները ուսումնական գործընթացում կարելի է օգտագործել ներքոհիշյալ նպատակներով.

- Խթանում կազմակերպելու,
- Մատուցվող ուսումնական նյութը ամրապնդելու,
- Խաղալով՝ իրենց սխալների հիման վրա, նյութը յուրացնելու,
- Դասին անդրադարձ կատարելու,
- Տնային առաջադրանքներ հանձնարարելու համար
- Ախտորոշիչ, ընթացիկ գնահատում իրականացնելու համար:

https://edpuzzle.com/media/617e3f6dd5d29c413682df2a-Edpuzzle գործիքն օգտագործվում է առցանց տեսահոլովակների մոնտաժ և խմբագրում իրականացնելու, «հարստացնելու» և ուսումնական նյութեր ստեծելու համար: Այս տիրույթում աշխատելու համար, հնարավոր է նաև փոփոխել տեսահոլովակը, եթե կա համապատասխան հղումը: Այս գործիքը նպատակահարմար է օգտագօրծել «շրջված դասարան» մեթոդի կիրառման ժամանակ «հարստացված հոլովակներ» պատրաստելու համար:

## Գործնական համատեքստ

Այս հետազոտական աշխատանքի համար նախատեսված փործարարական դասերն անց եմ կացրել Սյունիքի մարզի Շաղաթի միջնակարգ դպրոցում,որտեղ դասավանդում եմ «Հայոց եկեղեցու պատմություն» և «Հասարակագիտություն» առարկաները:
Փորցարարական դասերը կիրառել եմ 5-րդ,6-րդ դասարաններում «Հայոց եկեղեցու պատմություն» և 8-րդ դասարանում «Հասարակագիտություն» առարկաներից:

Բոլոր դասերին էլ կիրառել եմ ՏՀՏ-գործիքներ,դասաժամն ավելի հետաքրքիր,իսկ դասերն ավելի բովանդակալից դարձնելու համար:Առցանց գործիքների օգտագործումոն նպատակ եմ ունեցել դասին ներգրավել բացառապես բոլոր աշակերտներին:Իրենց մասնակցությունն են ունեցել նաև ԿԱՊԿՈՒ աշակերտները(5-րդ դասարան):
Դպրոցն ունի համապատասխան գույք և տեխնիկա նմանատիպ դասընթացներն առավել արդյունավետ կազմակերպելու համար:

## Հետազոտության ընթացք

### Փորձարարական դասի պլան 1

https://app.wisemapping.com/c/maps/1223196/public

### Փորձարարական դասի պլան2

https://app.wisemapping.com/c/maps/1223739/public

### Փորձարարական դասի պլան3

https://miro.com/app/board/o9J_lk_gmXw=/?invite_link_id=919685884263

# Փորձարարական դասի վերլուծություն 1

Դասարան՝ 5-րդ
Առարկա՝Հայոց եկեղեցու պատմություն
Թեմա՝ Հայաստանն Աստվածաշնչում
Դասի տիպը՝Համակցված

Այսօր փորցարարական դաս եմ անցկացրել «Հայոց եկեղեցու պատմություն»առարկայից:Դասալսումն իրականացրել է ուսմասվար՝Մ.Մուսաթյանը:

Դասի պլանը ներկայացրել եմ **«WiseMapping»**առցանց գործիքի օգնությամբ:**Խթանման** փուլում օգտագործվել է **«Edpuzzele»** arcanc գործիքը,որի միջոցով աշակերտները և վերհիշեցին հանձնարարված դասը և պատասխանեցին դասի վերաբերյալ տրվող հարցերին:**Իմաստի ընկալման փուլում** օգտագործվել է **«Canva»**գործիքը,որպես նոր նյութը ներկայացնելու մեթոդ:**Կշռադատման** փուլում կիրառվեց**«Learningapps»**առցանց գործիքը,որի միջոցով ամրապնդվեց նոր մատուցված դասը:Այնուհետև կատարվեց անդրադարձ և տնային առաջադրանքների հանձնարարում:

## Ինչ հաջողություններ ունեցա.

- Դասը հագեցած էր ՏՀՏ-առցանց գործիքներով,որոնց միջոցով դասապրոցեսը դարձավ ավելի համալրված և հետաքրքիր:
- Դասապրոցեսին մեծ հետաքրքրությամբ  մասնակցեցին նաև ԿԱՊԿՈՒ երեխաները:
- Դասի վերջում աշակերտները խնդրեցին նմանատիպ մեկ այլ դաս կազմակերպել:

## Ինչ թերացումներ ունեցա

- Դասն անցավ ըստ պլանավորածի,սակայն վերջում 5 րոպե ավելացավ:Ճիշտ է ,ես այն օգտագործեցի անդրադարձ փուլում և կատարեցի նաև նախորդ դասերի ամփոփում,սակայն

եթե ունենայի նախապես կազմած «Quizziz»,որպես «պահեստային մեթոդ» կկիրառեյի այն որպես հայտորոշիչ մեթոդ:

- Գնահատման համար չէի կազմել սանդղակ:








Canva




**Փործարարական դասի  վերլուծություն 2**

Դասարան՝6-րդ
Առարկա՝Հայոց եկեղեցու պատմություն
Թեմա՝Հայ Առաքելական եկեղեցու 7 խորհուրդները

Փործարարական երկրորդ դասս անց եմ կացրել «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայից 6-րդ դասարանում:**Դասի պլանը** ներկայացրել եմ «Wisemapping» արցանց գործիքի միջովով:**Խթանման փուլում** օգտագործել եմ Learningapps առցանց գործիքը,որպեսզի աշակերտները հարցերի միջոցով վերհիշեն հանձնարարված թեման:**Իմաստի ընկալման փուլի** ժամանակ երեխաներին բաժանելլ եմ **հայտորոշիչ թեստ(նախաթեստ)**,որի միջոցով ստուգվել են աշակերտների նախնական գիտելիքներն իրենց դեռևս չուսումնասիրած թեմաների վերաբերյալ: Թեստերի լրացնելուց հետո բացատրվել է նոր դասը  Miro գործիքի

միջոցով:**Կշռադատման փուլում** օգտագործվել է Canva գործիքը:Այնուհետև կատարվեց անդրադարձ ու պատասխանի միջոցով,հասկանալու համար,թե որքանով ընկալվեց թեման:Գնահատման համար կազմվել էր աղյուսակ,որտեղ դասի ընթացում կատարել եմ նշումներ (+,-)-ի տեսքով և ըստ այդմ գանահատել աշակերտներին:

Դասի ուժեղ կողմն այն է,որ դասին մասնակցում են բոլորը:
Կիրառվող ՏՀՏ-գործիքները մեծ հետաքրքրություն են առաջացնում աշակերտների մոտ:

Խնդիրը կայանում է նրանում,որ  աշակերտներից ոմանք կարծում են,որ այս դասապրոցեսները խաղեր են:






 

**Փորձարարական դասի վերլուծություն 3**

Դասարան-8-րդ
Թեմա -Ընտանիք
Առարկա-«Հասարակագիտությու»

Երրորդ փորձարարական դասն անց եմ կացրել «Հասարակագիտություն» առարկայից:Դասը լսում էր ուսմասվար Մ.Մուսաթյանը:
Դասի պլանը կազմած էր Miro + Wisemapping առցանց գործիքների միջոցով:**Խթանման փուլում Miro** գործիքի միջոցով կատարվեց գործնական աշխատանք: **Իմաստի ընկալման փուլում** օգտագործեցի Canva և **Miro** գործիքների միջոցով ներկայացրեցի «Ընտանիք»թեման:**Կշռադատման փուլում** կիրառեցի Quizziz առցանց գործիքը,որի միջոցով և ամփոփեցի թեման և կատարեցի գնահատում:

### Ի՞նչ հաջողություններ ունեցա

▪Աշակերտները հետաքրքրություն ցուցաբերեցին ՏՀՏ գոծիքներով աշխատելիս:

▪Նրանքն բավականին բարձր ակտիվություն ցուցաբերեցին:

▪Քանի որ թեման էլ հետաքրքիր էր,նամանավանդ սահիկաշարով ներկայացնելիս,աշակերտների մոտ նկատվեց նաև բարձր ոգևորություն:

**Ի՞նչ թերացումներ ունեցա**

▪Առաջին հայացքից երևում էր,թե երեխաները բավական ակտիվ են,բայց կային

աշակերտներ,որոնք կարելի է ասել գրեթե հետաքրքրված չէին նոր տեխնոլոգիաներով:Դասի ընթացքում իմ ցուցաբերած ջանքերը,որ նրանք էլ ակտիվ մասնակցություն ցուցաբերեն գրեթե անցան ապարդյուն(երբ ուշադրությունս մեկ այլ աշակերտի վրա էր լինում,նրանք նորից անուշադիր էին):Պետք է կազմել այնպիսի պլան,որի միջոցով դասապրոցեսին մասնակցեն բոլոր աշակերտները:




Տունը և ընտանիքը
Ընտանիքը հասարակության հիմքն է
Նրա սկզբնական օղակը


Գործնական աշխատանք
4.Վստահեք ընտանիքի բոլոր անդամներին
5.Մի կենտրոնացեք մյուսների թերությունների վրա
6.Պետք է լինի փոխադարձ հարգանք
ԼՈՒԾՈՒՄ
1.Հարգել և ինքներդ ձեզ և ընտանիքի բոլոր անդամներին
2.Ընդունեք ձեր սխալները
3.Եղեք ուշադիր ընտանիքի անդամների նկատմամ


26
Quizizz



# Տվյալների վերլուծություն




# Եզրակացություն

Նախ կարևոր եմ համարում նշել,որ այս կրթական գործընթացն առաջին հերթին զարգացրեց մեր՝ուսուցիչներիս հմտությունները:
Այնուհետև օգտագործելով բոլոր այս նորարարական տեխնոլոգիաները՝ կարողացա արդյունավետ դարձնել դասապրոցեսը՝որոշ չափով լուծելով նաև իմ առջև դրված խնդիրները.

**.Դասի ժամանակ աշակերտներն ուշադիր էին**
**.Կարողանում էին ընկալել ցուցադրած նյութն ու վերարտադրել՝ հիմնավորելով իրենց տեսածը:**
**.Դասապրոցեսին մասնակցում էին բոլոր աշակերտները,ներառյալ ԿԱՊԿՈՒ աշակերտները(5-րդ դասարան)**
**.Աշակերտները ցանկություն հայտնեցին մասնակցել նաև նորագույն տեխնոլոգիաներով հագեցած նմանատիպ այլ դասերի**
**.Ժամանակի առումով դասաժամը համապատասխանեց դասապրոցեսին:**

Հնարավոր է՝ավելի երկար ժամանակ լինելու դեպքում,այս հետազոտության արդյունքն ավելի տպավորիչ լիներ:

Սակայն այժմ ունեմ իմ առջև դրված այլ նպատակներ ձեռք բերած գիտելիքներս,կարողություններս ավելի զարգացնել,իմտանալ ՏՀՏ-գործիքները կիրառելու գործում և նպաստել դասապրոցեսի լիարժեք իրագործմանը:

## Գրականության ցանկ


1.ՀՀ ԿԳՆ Երևանի փիվ 198 ավագ դպրոցի տնօրեն Արտաշես Թորոսյան—Նպատակի ընտրություն դասը պլանավորելիս

2.Ֆրիդրիխ Էբերտ հիմադրամ,Հայաստան 2020թ—Ուսուցման արդյունավետ հնարներ

3.Մասնագիտական զարգացում—Ուսումնառության մեթոդներ